




ՀԻՄՆԱԴՈՐՈՒՄ՝ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՈՒ ԲՆԱԿԱՆ (ՈՉ-ԱԻԱՆԴԱԿԱՆ) ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐՈՎ

Ինչպէս նշեցինք (Էջ 140), բարոյագիտութեան հիմնաւորումը կարելի է 2 միջոցներով.-

- **Առաջին՝** աւանդական բարոյական սկզբունքներով եւ
- **Երկրորդ՝** բնական (ոչ-աւանդական) բարոյական սկզբունքներով:

Աւանդական բարոյական սկզբունքներու հիմքը, ընդհանրապէս, աւանդական սովորութիւններն ու կրօնական վարդապետութիւններն են եւ այստեղ գտնուող բացարձակ հեղինակութիւնը, որ կը ներկայացնէ՝ վերջնական հիմնաւորումը (Ultimate Grounding): Քրիստոնէական բարոյագիտութեան պարագային, օրինակ, բացարձակ հեղինակութիւնը Աստուած է, որ կը ներկայացնէ՝ վերջնական հիմնաւորումը: